Ը. Կարսի Նահանգում.						
Կարս քաղաքում	1	4	150	1	5	75
Թ. Թիֆլիսի Ընդհան.						
Թիֆլիս քաղաքում կայ մի դպրանոց . .	.	16	316			
Ծխական դպրոցներ	8	24	297	7	60	595
Թիֆլիսի գաւառում	15	17	302	1	8	50
Գորի քաղաքում	1	3	40	1	3	35
Նորա գաւառում	2	4	85	.	.	.
Սղնախ քաղաքում	1	4	48	1	5	23
Թելավ քաղաքում	1	3	78	1	4	53
Զարաթաղում	1	2	46	.	.	.
Ախալցխայում	3	16	405	2	22	294
Նորա գաւառում	3	3	65	.	.	.
Ախալքալաք քաղաքում	1	6	162	1	6	60
Նորա գաւառում	32	32	932	.	.	.
Քուլպայիս քաղաքում	1	3	27	1	3	37
Սլիսավկոպոլ քաղաքում . . .	2	8	124	1	8	95
Նորա գաւառում	6	6	244	.	.	.
Դաղստանի գաւառում	2	2	133	.	.	.
Ժ. Պարտէզի Ընդհան.						
Հուշի քաղաքում կայ մի դպրանոց . .	.	15	334			
Ծխական դպրոցներ	.	.	.	1	15	113
Նորա գաւառում	4	4	174	.	.	.
Նուխի քաղաքում	1	7	112	1	2	33
Նորա գաւառում	3	4	125	.	.	.
Ի. Շամախու Ընդհան.						
Շամախի քաղաքում կայ մի դպրանոց . .	.	5	130			
Ծխական դպրոցներ	.	.	.	1	5	48
Բագու քաղաքում	1	6	107	1	6	32
Կուբայում	1	2	40	1	4	31
Խաչմազ գիւղում	1	1	12	.	.	.
Բիլվարկ գիւղում	1	1	20	.	.	.
Մազրասկ գիւղում	1	1	91	.	.	.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Ինչպէս երևում «Կարապետեան» և «Եղիսաբեթեան» դպրոցների հոգաբարձութեան զրծերից, որ 1878 *թ. «Եղիսաբեթեան» դպրոցի պրոգրամի մէջ պետք մտնէր անտեսականութիւնը, որի սկզբնապատճառը լինելով նոյն իսկ գերապատիւ Գրիգոր Արքեպիսկոպոս Սարգիսեանը, անհրաժեշտ համարեց թեմական վերատեսչի գրութեան համեմատ, իւր վերայ առնել նաև*

Նորա իրագործելու աշխատութիւնը, որ և նախագիծ կազմելով ուղարկած էր Թեմական վերատեսչին ի հաստատութիւն։ Վերատեսուչը գեր. Արքեպիսկոպոսի ուղարկած նախագիծը հաստատելուց յետոյ խորին շնորհակալութիւն էր յայտնած Նորին Գերապատուութեան Գրիգոր Արքեպիսկոպոսին առանձին գրութեամբ նոյն թուի սեպտեմբերի 9ին № 168, բայց զարմանումեմ, որ այս տեսակ ջերմեռանդ և արդիւնաւէտ հոգատարութիւնը գլխաւորապէս «Եղիսաբէթեան» դպրոցի օգտին և յառաջադիմութեան մասին ԱՐԴԻՆ ԴԴԷՐԻՆ մէջ ո՛չ իրականութիւն ստացաւ մինչև ցայսօր, և ոչ հաստատութիւն, այլ ոչնչացաւ։ Ընթերցողը կվկայէ թէ ի՞նչքան նպատակայարմար և գեղեցիկ միջոց մի էր դա, եթէ այդ նախագիծը մացրած լինէր «Եղիսաբէթեան» դպրոցի պրոգրամի մէջ, և զորանով ի՞նչքան աւելի յառաջ պէտք քայլէր այն դպրոցը և հասնէր իւր ցանկալի նպատակին, որից արդէն շեղված պէտք է զուրկ և թշուառ մնայ խեղճ հայ աղջիկը,—կեանք զարգարող գիտութիւնից, որը տնտեսականութիւնն է, մարդկային կենցաղավարութեան հիմքին անկիւնաքարը, ընտանեկան օրմին թաղանդը։ Այս առարկայի վերաբերութեամբ նախանձոտ չար լեզուները ասումեն, որ իբրև թէ Նորա անիրագործման պատճառն եղած է նոյն դպրոցների հոգաբարձութիւնը, և գլխաւորապէս հոգաբարձութենից մինը, որ սաստիկ նախանձում և չարանումէր Գրիգոր Արքեպիսկոպոսի այդ աղգօգուտ ձեռնարկութեան վերայ, ինչպէս և ուրիշ ձեռնարկութիւնների։ Բայց այժմս, նայելով մեր ժողովրդեան գլխաւոր պահանջներին և քաղաքական կենցաղավարութեան հանգամանքներին, նա մանաւանդ և աչքի առաջ ունենալով այն մեծ և ցաւալի կորուստն, որ մի օր շատ ծանր և սոսկալի տպաւորութիւն պիտի ունենայ Ախալցխայի հայ հասարակութեան վերայ, ի նկատի ունենալով իւրեանց աղջիկների զոհաբերութիւնը, այս և այն տեսչի, այս ու այն ուսուցչի անձնական շահերն, իսկ իւրեանց զաւակների բարոյական զրկանքն, ժամանակի թանկագին կորուստն, և նոցա անգործունեայ կեանքն, և այլն, անհրաժեշտ եմ համարում հրաւիրել ինչպէս տեղիս բոլոր հայ հասարակութեան, նոյնպէս և Գրիգոր Արքեպիսկոպոս Սագինեանի և Թեմական վերատեսչի ուշադրութիւնը այս հարցի վերայ, որպէս զի մի օր յառաջ առանց այլ ևս ժամանակ կորցնելու և աղգի զաւակների «Եղիսաբէթեան» դպրոցի աշակերտուհիների շահերին մնասելու, և այս ու այն տեսչի, այս և այն ուսուցչի շահերն պաշտպանելու, սկսեն այս կենցաղօգուտ տնտեսական արհեստն մտցնել, ինչպէս նոյն ուսումնարանում, նոյնպէս և «Նոր—Արշալոյս» օրիորդական դպրոցում։

Մարտի 16ին գեր. Արքեպիսկոպոս Սագինեանը Վանի սովեալների մասին սՓրկիչ եկեղեցում մի շատ սրտառուչ ատենաբանութիւն արաւ։ Նորա խօսքերն այնպիսի ներգործութիւն ունեցան, որ համարեա բոլոր ունկընդիրներն, թէ այրեր և թէ կանայք, իւրեանց լումաներն արտասուքով սրբացուցած նուիրումէին իւրեանց համարիւն սովատանջ եղբայրներին և քոյրերին։ Իսկ կանանց և օրիորդների ոգևորութիւնը անկարելի է նկարա-

գրել։ Բաւական է այսքան միայն ասել՝ որ ամենաթշուառ աղքատ կինը՝ «ինձ ևս Աստուած ողորմած է՝ դեռ ևս երեք օրուան հաց ունիմ ուտելու» ասելով իւր ճակատի զարդերից երեք հատ ոսկի դանձանակն է արկանում։

Ա.Խալիբեան։ ԱՐԵՒ։

ԻՄ ՄՕՏ ԵԿ։

Դու մի՛ դար իմ մօտ բաղդի բոպէին,
Ես չեմ կարող քեզ հասկանալ բնաւին,
Քեզ պատասխանել՝ մասնակից լինել
Չեմ կարող իմ մէջ ես ոյժեր գտնել։
Քո բազմակոհակ աղբիւր գեղեցիկ
Կասկածիս թոյնով կթունաւորեմ։
Քո լաւ՝ առաջին՝ հոտաւէտ ծաղիկ
Անզգուշութեամբս կըոչնչացնեմ։
Իսկ եթէ այրող խեղդող վշտի դէղ
Զգայուն կուրծքումդ հրդեհ գոյացնէ՝
Եթէ ցաւ՝ անձուկ մթին ամպի պէս
Քեզ ամենուստեք կշրջապատէ՝
Եւ տանջանքի տակ ընկած վհատած՝
Քեզ ոչինչ նեցուկ չգտար ուրեք՝
Մի բոպէ հանգիստ զուր կլինիս պտուած՝
Դու այն միջոցին՝ ընկե՛ր՝ իմ մօտ եկ։

Իշխան Բաֆրատունի։

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց՝ Քանի դար է՝ որ իւրաքանչիւր տարի կատնենք Քրիստոսի Յարութիւնը՝ բայց պիտի գայ արդեօք այն փափագելի և գերերջանիկ օրը՝ երբ մենք յարուցած լինելով բարոյապէս ընկած դրութենից՝ արժան և իրաւ տօնել կարողանանք Փրկչի յարութիւնը՝ սիրելով Նորան. որովհետև Տէրը ինքն կասէ. «Եթէ ինձ կսիրէք՝ իմ պատուիրանները պիտի պահէք. ով իմ պատուիրաններս կպահէ՝ նա է ինձ սիրողը»։ Սակայն մեր անդադար թշնամութիւնը՝ խաբէութիւնը՝ զրախօսութիւնը՝ եսականութիւնը՝ անարգ նախանձը՝ արծաթասիրութիւնը՝ ապերախտութիւնը և այլն և այլն՝ Յիսուսի սէրի և յարութեան նշաններ կարող են միթէ համարվել՝ թէ Յիսուսի բոլորովին մահացած թաղված լինելը մեր սրտերում։ Ուրեմն թող դարձեալ և կրկին և միշտ ցանկանք՝ որ Քրիստոս յարութիւն առնէ մեր մէջ և լինի մեզ հետ իւր շնորհով՝ նախապէս մեզ պատրաստելով լինելու Նորա հետ մեր սէրով։

***